



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«28 08 2019թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000067

Ձեռնարկողը՝

«Մեծ Մասրենի» ՍՊԸ  
Կողայքի մարզ, Պողյան ավան

Գործունեությունը՝

Ծաղկաձոր համայնքի գլխավոր հափակագծի շրջակա  
միջավայրի վրա ազդեցության ուղղակի պահպան  
գնահատման հաշվեդրություն  
Կողայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնյան

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000067

<<28>> 08 2019թ.

## Ծաղկաձոր համայնքի գլխավոր հարակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրութային փաստաթուղթ.

- ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն,
- ծրագրային փաստաթղթեր

Տեղադրման վայրը՝

Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնք

Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը մշակված է Ծաղկաձորի համայնքապետարանի պատվերով (ՊԱՏՎԵՐ N ԾԲ-ԳՀ ԱՇՁԲ - 18/8), իիմք ընդունելով համայնքի վերաբերյալ գոյություն ունեցող արիստվային նյութերը, համայնքի զարգացման ուղղվածությունը, տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները, հատակագծային լուծումները, նախագծային առաջադրանքը և տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Ծրագրի նպատակն է հստակեցնել բնակավայրի տարածքների ֆունկցիոնալ նշանակությունը և հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները՝ տրանսպորտային, ինժենիկական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, բնապահպանական լուծումների համայիրի կիրառումով, տարածքների հողօգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով։ Գնահատման հաշվետվության համար իիմք է ընդունվել համայնքի գոյություն ունեցող իրավիճակի և հեռանկարային զարգացման ծրագրի համեմատական վերլուծությունը, հողային ռեսուրսների փոփոխությունների իրականացման հետևանքով ազդեցությունների, նախատեսվող միջոցառումների համադրումը և գնահատումը։ Համայնքում զարգացման հիմնական ուղղություններն են՝ զբոսաշրջությունը, առողջարանային, տուրիզմի, հանգստի կազմակերպման, առևտուրի և սպասարկման ոլորտները։

Ծաղկաձոր համայնքը գտնվում է Կոտայքի մարզում՝ Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջին, ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա։ Սահմանագիծը է



Կոտայքի մարզի Աղավնաձոր, Բջնի, Սոլակ, Քաղսի և Հրազդան համայնքներին: Երևան քաղաքից գտնվում է 51 կմ հեռավորության վրա:

Համայնքն իր ժամանակակից հյուրանոցներով (50) և հանգստյան տներով, լեռնադահուկային հանգստավայրով և ճոպանուղով համարվում է հանրապետության զբոսաշրջության կարևոր կենտրոններից մեկը: Ծաղկաձոր քաղաքը կառուցապատված է հիմնականում 1-2 հարկանի քարե տներով: Համայնքում առկա են միջնակարգ, մանկական արվեստի դպրոցներ, քաղաքային գրադարան, Օրբելի եղբայրների տուն-թանգարան, կայի հանգույց, առևտորի և հասարակական սննդի սպասարկման օբյեկտներ և այլն: Ծաղկաձորի կրոնա-մշակութային օջախն է հանդիսանում Կեչառիսի վանական համալիրը: Շնորհիվ իր կազդուրիչ անտառների, բուժիչ կլիմայի, առանձնահատուկ լեռնագրական պայմանների և որպես հանրապետության շուրջտարյա գործող կարևորագույն հանգստավայր՝ << կառավարության 2006 թվականի փետրվարի 1-ի N 95-Ա որոշմամբ, Ծաղկաձորը համարվել է զբոսաշրջային կենտրոն: Ծաղկաձոր քաղաքն ունի բուժական և ուեկտեացիոն ռեսուրսներ: Ֆիզիկաաշխարհագրական, բժշկակլիմայական (տարեկան 230-260 օր արևային օրեր), լանդշաֆտային և լեռնագրական պայմանները նպաստավոր են կլիմայաբուժության զարգացման համար:

Կլիման բարեխառն է, չոր ամառով և ցուրտ ձյունառատ ձմեռով, տարեկան միջին ջերմաստիճանը ձմռանը  $-6^{\circ}\text{C}$  է, ամռանը  $+22^{\circ}\text{C}$ : Տարեկան տեղումների քանակը 600-800մմ է:

Տարածքի ռելիեֆն ունի հորիզոնական մասնատվածություն՝ հրաբխային սարահարթի տեսքով, համեմատաբար հաղթ բլրային ռելիեֆով՝ թեք լանջերով, ծալքավոր մեծաբեկորային առանձնացումներով և գետերի շրջանում հունային դարավանդներով: Երկրաբանական կառուցվածքին բնորոշ են լիթոդային պեմզաները, ներկայացված ավազակավերով, մանրախճի և գլաքարերի խառնուրդներով, մակերևութային էռողիայով: Համաձայն սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզագրական տվյալների հորիզոնական արագացման արժեքը կազմում է 0.4g:

Համայնքի սահմանով հոսում է լեռնային Ծառաղբյուր գետակը: Ծաղկաձոր գետն ուսումնասիրվող տարածքի սահմաններում ունի վարար հոսք, որի աջակինյա հատվածի գաղոթափ թերությունը նպաստում է կայուն սողանքների առաջացմանը:

Համաձայն հաշվետվության ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են 150մ և ավելի խորը հորիզոնների վրա: Տարածքը հարուստ է ստորգետնյա ջրերով և քաղցրահամ ջրերի (20-ից ավելի) ելքերով: Համայնքի ջրամատակարարումը կատարվում է բաշխիչ ցանցի միջոցով՝ <<Վեռլիա Ջուր>> ՓԲԸ կողմից: Ոռոգման ցանցն ունի վերանորոգման կարիք: Ծաղկաձոր համայնքը հիմնականում կոյուղացված է, բնակավայրից կոյուղացրերը, կենցաղային և արտադրական հոսքաջրերը հեռացվում են դեպի Հրազդան քաղաք:

Համայնքի տարածքում հիմնականում գերակշռող են բազմամյա բույսերը, առկա են նաև լեռնատափաստանային (հացազգիների գերակշռությամբ), տափաստանային, մարգագետնային բուսատեսակները: Ծաղկաձորի անտառային էկոհամակարգին բնորոշ են բուխի, հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակները:

Կենդանական աշխարհին բնորոշ են լեռնային տափաստանների կենտրոնական աշխարհի ներկայացուցիչները և ողնաշարավոր կենդանիները: Հանուրառ կենդանտեսակներից են սպիտակատամիկը, աղվեսը, դաշտամուկը, թռչնատեսակներից՝ կաքավը, կոռունկը և այլն: Տարածքում հանդիպում են նաև կարմիր գոյզան անհետացող բուսատեսակներ և կենդանատեսակներ:



Ներկայում Ծաղկածոր համայնքի աղբը տեղափոխվում է Հրազդան քաղաք՝ համայնքապետարանի և «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ-ի միջև կնքված առքահանության պայմանագրի համաձայն: Հեռանկարում նախատեսվում է աղքահանությունը կատարել «Կոտայքի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ծրագրի շրջանակներում: Համայնքում հողի աղտոտման հիմնական աղբյուր են հանդիսանում կենցաղային կոշտ թափոնները (305տ/տարի): Բնակչության աճով պայմանավորված հեռանկարում այն կազմելու է 335տ/տարի: Համայնքի արևելյան հատվածում, տեղական նշանակության ճանապարհի աջ և ձախ կողմերում գտնվում են 3.2 հա և 0.3 հա մակերեսներով երկու գործող գերեզմանատներ: Հեռանկարում լրացուցիչ գերեզմանոցի տարածքներ չեն նախատեսվում, քանի որ վերջիններս բավարարելու են առաջիկա 15 տարիների ընթացքում բնակչության աճին:

Համայնքում բացակայում են գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունները: Սակայն Հրազդան քաղաքում գործող Հրազդան ԶԷԿ-ը, Ցեմենտի գործարանը, ջերմոցները կարող են բացասական ազդեցություն ունենալ քաղաքի օդային ավազանի վրա: Համայնքում աղմուկի և մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրը ավտոտրանսպորտն է: Համաձայն հաշվետվության տարածքի համալիր գնահատումներով համայնքի օդային ավազանի աղտոտվածությունը վտանգ չի ներկայացնում, մթնոլորտային օդում ֆոնային կոնցենտրացիաները չեն գերազանցում համապատասխան սահմանային թույլատրելի նորմերը:

Համայնքը գաղփիկացված է, ջերմամատակարարումն իրականացվում է հիմնականում անհատական գազի սարքերով: Էլեկտրամատակարարումը կատարվում է Ծաղկածորի մարզահամալիրի տարածքում գտնվող Ենթակայանից, որը 235 կՎ օդային գծերով միացված է Հրազդան քաղաքի Ենթակայանին: Ներհամայնքային ճանապարհները վերանորոգված են և գտնվում են բարվոք վիճակում:

Համայնքի բնակչությունը 01.01.2018թ դրությամբ կազմում է 1503 մարդ, հեռանկարում՝ 1650 մարդ: Բնակչության գրաղվածության հիմնական մասնագիտացված ուղղություններն են՝ այգեգործությունը և բանջարաբուծությունը: Աշխատունակ բնակչությունը գրաղված է հիմնականում սպասարկման ոլորտում: Ծաղկածոր համայնքի գլխավոր հատակագիծը նախկինում (16 հունիսի 2006թ.) ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն, որի համաձայն համայնքի վարչական սահմանը կազմում էր՝ 529.8 հա: Համաձայն սույն ռազմավարական գնահատման հաշվետվության, պետական պահուստային հողերի ընդգրկման հաշվին (2005թ հոկտեմբերի 27 N1873-Ն ՀՀ կառավարության որոշում) կատարվել է Ծաղկածոր համայնքի վարչական սահմանների փոփոխություն, որի արդյունքում վարչական սահմանը մեծացել է, կազմելով 1618.29 հա:

Համայնքի հողային ռեսուրսների հիմնական տեսակներն են՝ ռեկրեացիոն, պատմամշակութային և անտառային հողերը: Զգալի տարածքներ են կազմում անտառները՝ 366.96 հա (տարածքի 22.67%-ը): Համայնքում գերակշռող հատուկ պահպանվող հողերն (1014.54հա) են, որից 1003.52 հա-ը հանգստի համար նախատեսված տարածքներն են: Համայնքը չունի հատուկ նշանակության և բնապահպանական հողեր:

Համաձայն գնահատման հաշվետվության Ծաղկածորի հեռանկարային գարգացման հետազոտությունների տարածքը ներառում է Ծաղկածոր գետի ավազանը, կազմելով է 6.2 կմ<sup>2</sup>: Հեռանկարում նախատեսվում է Ծաղկածոր համայնքում գարգացնել այգեգործությունը, բանջարաբուծությունը, անասնաբուծությունը:

Հեռանկարային գարգացման շրջանակներում նախատեսվում է կատարել համայնքի հողային ֆոնդի՝ նպատակային և գործառնական նշանակության փոփոխություններ:

Կատարվող հողատեսքային փոփոխությունների արդյունքում հողային ռեսուրսների՝ ներկա վիճակը և հեռանկարն ունենալու են հետևյալ բաշխվածությունը.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 59.16 հա, որից 3.19 հա-ը վարելահող է, արոտավայրերը՝ 54.16 հա, այլ հողատեսքերը՝ 1.81 հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- բնակավայրի հողեր՝ 162.71հա, հեռանկարում՝ 180.32 հա, որից բնակելի կառուցապատման՝ 47.77հա, հեռանկարում՝ 59.19հա, հասարակական կառուցապատման՝ 74.37 հա, հեռանկարում՝ 84.99հա, ընդհանուր օգտագործման՝ 26.48հա, հեռանկարում՝ 29.29հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 5.63 հա, հեռանկարում՝ 1.775հա, որից արդյունաբերական՝ 0,75, հեռանկարում 0, գյուղարտադրական՝ 4.88, հեռանկարում՝ 1.78հա,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 0.79հա, հեռանկարում՝ 16.87 հա, այդ թվում էներգետիկակայի՝ 0.30հա, հեռանկարում՝ 13.01հա, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.47հա, հեռանկարում՝ 3.84հա, կապի՝ 0,02հա, հեռանկարում չի փոփոխվում,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1014.54 հա, հեռանկարում՝ 985.44հա, որից առողջարանային՝ 6.30 հա, հեռանկարում չի փոփոխվում, հանգստի համար նախատեսված՝ 1003.52հա, հեռանկարում՝ 977.55հա, պատմության և մշակույթի՝ 4.72 հա, հեռանկարում՝ 1.59հա,

- անտառային հողեր՝ 366.96 հա, հեռանկարում չի փոփոխվելու,
- ջրային հողեր՝ 8.50հա, հեռանկարում՝ 7.76հա,

Համաձայն գնահատման հաշվետվության հողատեսքերի նպատակային և գործառնական նշանակության ընդհանուր փոփոխությունները կազմելու են 46.38 հա, որից 11.36 հա-ը գործառնական փոփոխություններն են: Փոփոխությունները կատարվելու են հիմնականում հանգստի համար նախատեսված հողերի հաշվին: Հողատեսքերի փոփոխության արդյունքում աճելու են բնակավայրի, հասարակական կառուցապատման հողերը: Համայնքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ճշգրտման արդյունքում՝ 0.36 հա բնակավայրի և հանգստի հողերից տեղափոխվել են հատուկ պահպանվող հողերի կատեգորիա: Ջրային հողերի (գետեր) փաստացի մակերեսի (8.50 հա) ճշգրտման շնորհիվ, հեռանկարում ջրային հողերից 0.74 հա տեղափոխվելու է հանգստի հողերի կատեգորիա: Ճշգրտվել են նաև համայնքի հուշարձանների, լանդշաֆտի պահպանության գոտիները, օգտագործման, կառուցապատման և սպասարկման ուժիմները: Հեռանկարում նախատեսվում է կազմակերպել 3.0 հա ընդհանուր օգտագործման կանաչ գոտի՝ հանգստի հողերի հաշվին: Հեռանկարում բնակչության 1 շնչին ընկող կանաչ տարածքներով ապահովվածությունը կազմելու է 18,2 մ<sup>2</sup>/մարդ:

Հողատեսքերի փոփոխությունների արդյունքում հեռանկարում նախատեսվում է կատարել.

- բնակելի թաղամասերի վրայով անցնող բարձր լարման էլեկտրամատակարարման գծերի տեղափոխում, իին փայտյա հենայուների փոխարինում, բնակավայրերի էլեկտրամատակարարման ցանցի կառուցում, այլընտրանքային էներգետիկայի զարգացում,

- քաղաքային հանգստի գոտու, 2 մանկական խաղահրապարակի՝ 8 լայնությամբ փողոցների կառուցում, բուժ ծառայությունների կարողությունների զարգացում - ջրամատակարարման բաշխիչ ցանցի, ջլորակայանի, ՕԿՁ-ի կառուցում և վերակառուցում,





- հակաէրողիոն, ագրոմելիորատիվ, հիդրոտեխնիկական, հակահեղեղային, հակասողանքային գործողությունների կատարում՝ հողային ծածկույթի պահպանման նպատակով,

- գործողությունների կատարման արդյունքում առաջացող հողի բերրի շերտի պահպանում և նպատակային օգտագործում,

- աղտոտված հողերի օգտագործում՝ կանաչապատման նպատակով, ժամանակակից ագրոտեխնիկայի կիրառում, քիմիական նյութերի օգտագործման սահմանափակում,

- հանքային պարարտանյութերի հետ համատեղ կենդանական ծագման օրգանական պարարտանյութերի (գոմաղը) օգտագործում՝ հողերի մաքրման, հողի բերրիությունը և սնուցումն ապահովելու նպատակով,

- թափոնների կառավարման բարելավում, թափոնների ոչնչացում՝ հատուկ հատկացված տեղերում, հրդեհավտանգ թափոններից մաքրում՝ հողային ռեսուրսները աղտոտումից պահպանելու համար,

- մշտադիտարկումների միջոցով հողի որակի՝ ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունների վերահսկում՝ էկոլոգիապես մաքուր օրգանական գյուղատնտեսության ներդրման նպատակով,

- անտառների պահպանության նպատակով՝ անտառկառավարման պլանների, դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնման ծրագրերի մշակում, անտառաշինական աշխատանքների, վնասատուների ու հիվանդությունների դեմ ինտեգրացված պայքարի իրականացում,

- հասարակական շինություններում ժամանակակից բարձր ՕԳԳ-ով կաթսայատների տեղադրում, ճանապարհային ծածկույթի բարելավում՝ օդային ավազանի վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով,

- ավտոճանապարհների եզրագծով լրացուցիչ անտառունկում՝ ավտոտրանսպորտի արտանետումների վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով,

- արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության տարհանում, պատսպարում, անհատական պաշտպանության միջոցներով ապահովում և այլն:

**Պատճառաբանական եզրահանգումներ.** համաձայն գնահատման հաշվետվության համայնքի հեռանկարային զարգացման հատակագծային լուծումները նախատեսվել են, ելնելով Ծաղկածոր քաղաքի միջազգային ստանդարտներին համապատասխան տուրիստական կենտրոն լինելու պահանջից: Գործողությունների նախագծային լուծումները իրականացվելու են գոյություն ունեցող կառուցապատված տարածքների սահմաններում, շրջանցելով ծառապատ տարածքները: Անտառային տարածքների հողերը հեռանկարում չեն օգտագործվելու և փոփոխության չեն ենթարկվելու:

Հետևաբար համայնքի հեռանկարային զարգացումը համայնքի բնական լանդշաֆտի, կենսաբազմազանության և շրջակա միջավայրի բաղադրիչների վրա լինելու է նվազագույն, կրելով ժամանակավոր բնույթ: Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, համապատասխան մասնագիտական կառուցները՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, սպորտի և մշակույթի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, որոնց կարծիքների հիման վրա ուղղված համապատասխան գնահատման հաշվետվությունը լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Ծաղկածոր համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել: Հիմնադրության վհաստադիթ



իրականացումը նպաստելու է համայնքի կայուն զարգացմանը և բնակչության պայմանների բարելավմանը:

### Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել մշտադիտարկման (մոնիթորինգ) կատարումը, հետևախագծային վերլուծության ծրագրի կազմումը:

- Հիմնադրութային փաստաթղթով նախատեսվող գյուղատնտեսական, շինարարական և այլ աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած հնարավոր պատմամշակութային և հնագիտական շերտերի առկայության դեպքում անհրաժեշտ է հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ հնագետի եզրակացությունը ստանալուց հետո:

- Համայնքի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Շաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ

թ. Նուրիջանյան

